Հավելված 1
Գորիսի պետական համալսարանի
Գիտական խորհրդի 2019 թ. հոկտեմբերի 11-ի
թիվ 5 նիստի արձանագրային որոշման

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությունը ԳՊՀ գործունեության կառավարման բաղկացուցիչ մասն է: Այն կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացման համար ֆինանսների տնօրինման, կազմակերպման և օգտագործման գծով գործառույթների, կանոնների, սկզբունքների ամբողջություն է, որն ուղղված է ֆինանսական միջոցների հավաքագրմանը, բախշման գործընթացների կարգավորմանը, ֆինանսական կայունության ապահովմանը:
2. Քաղաքականությունը մշակված է ՀՀ գործող օրենսդրության, նորմատիվ կարգավորող փաստաթղթերի և ԳՊՀ կանոնադրության համաձայն:

II. ԳՊՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

3. ԳՊՀ ֆինանսական միջոցների ստացման աղբյուրներ են հանդիսանում
1) պետական բյուջեից ստացվող միջոցները,
2) Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, միջազգային դրամաշնորհները,
3) սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:
4. ԳՊՀ-ն սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:
5. ԳՊՀ գործադիր մարմինը՝ռեկտորը, օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

6. ԳՊՀ-ի իրավասությունն է՝

ա) ֆինանսների կառավարում, ներառյալ՝ աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, բարձրագույն ուսումնական հաստատության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը.

բ) Բարձրագույն ուսումնական հաստատությունն ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ՝ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանում է կրթաթոշակներ:

7. ԳՊՀ-ն իր ֆինանսական գործունեության իրականացման համար ՀՀ Ֆինանսների նախարարության բանկում ունի բանկային հաշիվներ, դրամարկղային գործառնությունները կատարում է գանձապետական CLIENT TREASURY ծրագրի միջոցով:

8. Պետական բյուջեից ստացված միջոցները (ուսանողական նպաստ, կրթաթոշակ, գիտ.թեմաների ֆինանսավորում) ստացվում են լիազոր մարմնի և ԳՊՀ-ի միջև կնքված պայմանագրերի ծրագրերին համապատասխան և ծախսվում են բացառապես այդ ծրագրերով սահմանված նպատակներով և չափաքանակներով:

9. Միջազգային կազմակերպություններից ֆինանսավորումները ստացվում են կոնկրետ դրամաշնորհային ծրագրերին համապատասխան և ծախսվում ծրագրերով նախատեսված նպատակների համար:

10. ԳՊՀ-ն ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք է բերում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

11. Ֆինանսական միջոցները ծախսվում են ռեկտորի՝ օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակած հրամանների, հրահանգների համաձայն:

12. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները պետական կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

13. ԳՊՀ-ն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը, պահպանելով նվազագույն աշխատավարձի մասին ՀՀ օրենքի պահանջները:

14. ԳՊՀ-ի ծախսերի նախահաշվի նախագիծը ձևավորվելուց հետո յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաստատվում է ԳՊՀ խորհրդում և ներկայացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմին («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28):

15. Տարեկան բյուջեն, ելնելով անհրաժեշտությունից, կարող է փոփոխվել:

16. Ֆինանսական միջոցները ծախսվում են տարեկան հաստատված նախահաշվի սահմաններում: Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնության, արդյունավետության վերաբերյալ ամեն տարի համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշիվների և նրանց կատարողականների վերաբերյալ տրվում է հաշվետվություն ԳՊՀ խորհրդի նիստում:

ԳՊՀ ռեկտոր՝ Արտուշ Ղուկասյան

/_____/